ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնք
ք. Մարալիկ, Մադաթյան փ. 1, հեռ. 0242- 2-22-37, ani.shirak@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ N 133-Ա

<<31>> հոկտեմբերի 2024 թվականի քաղաք Մարալիկ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՄԱՐԱԼԻԿ ՔԱՂԱՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ, ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՄԱՐՎՈՂ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ, ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ 08-003-0020-0149 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ 0,077089 ՀԵԿՏԱՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԸ ԸՆԴԼԱՅՆՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔՈՎ <<ԱՆԻ ՄԱՐԱԼԻԿ>> ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի, Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 66-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետի, 2-րդ մասի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի մայիսի 12-ի N 286 որոշմամբ հաստատված «Պետական և համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերի տրամադրման կարգի» 6-րդ կետի դրույթներով, հաշվի առնելով, որ օտարվող հողամասը բավարարում է Հայաստանի Հանրապետության կառավարության 2016 թվականի մայիսի 26-ի N 550-Ն որոշման 1-ին կետի 2-4-րդ, 6-րդ, 7-րդ ենթակետերի պահանջները և այն, որ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի Մարալիկ քաղաքի վարչական սահմաններում գտնվող, համայնքի սեփականությունը համարվող բնակավայրերի նպատակային նշանակության, հասարակական կառուցապատման գործառնական նշանակության 08-003-0020-0149 կադաստրային ծածկագրով 0,077089 հեկտար մակերեսով հողամասը հասցե՝ մարզ Շիրակ, Անի համայնք, քաղաք Մարալիկ, Հ. Շահինյան փողոց թիվ 104/4 հողամաս/ հնարավոր չէ որպես առանձին գույքային միավոր օտարել հրապարակային սակարկությունների միջոցով, ընդառաջելով <<ԱՆԻ ՄԱՐԱԼԻԿ>> սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության 2024 թվականի հոկտեմբերի 24-ի դիմումին.

Հայաստանի Հանրապետության
Շիրակի մարզի Անի համայնքի ավագանին որոշում է՝

1. <<ԱՆԻ-ՄԱՐԱԼԻԿ>> սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը սեփականության իրավունքով պատկանող մարզ Շիրակ, Անի համայնք, քաղաք Մարալիկ, Հր. Շահինյան փողց, թիվ 104 հասցեում գտնվող /Գազալիցկավորման կայան/ 08-003-0020-001 կադաստրային ծածկագրով հողամասի /Վկայական N 2609263, տրված՝ <<16>>02 2009թ./ և մարզ Շիրակ, Անի համայնք, քաղաք Մարալիկ, Հր. Շահինյան փողոց, թիվ 302/5

հասցեում գտնվող 08-003-0020-0160 կադաստրային ծածկագրով 0,25594 հեկտար բնակավայրերի նպատակային նշանակության, հասարակական կառուցապատման գործառնական նշանակության հողամասերի միջնամասում գտնվող Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի սեփականությունը համարվող բնակավայրերի նպատակային նշանակության, հասարակական կառուցապատման գործառնական նշանակության 08-003-0020-0149 կադաստրային ծածկագրով հողատարածքում առկա 0,077089 հեկտար մակերեսով հողամասը / հասցե՝ մարզ Շիրակ, Անի համայնք, քաղաք Մարալիկ, Հ. Շահինյան փողոց թիվ 104/4 հողամաս/, ընդլայնման նպատակով, ուղղակի կարգով տվյալ հողամասի կադաստրային գնի չափով՝ 1 (մեկ) քառակուսի մետրը՝ 792 (յոթ հարյուր իննսուներկու) Հայաստանի Հանրապետության դրամ, 0,077089 հեկտար հողամասի համար **610 545 /վեց հարյուր տաս հազար հինգ հարյուր քառասունհինգ/ Հայաստանի Հանրապետության դրամ** արժեքով վաճառել <<ԱՆԻ-ՄԱՐԱԼԻԿ>> սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը (հետագայում Ընկերություն, իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գրանցման համար 48.110.00209, գրանցման ամսաթիվ՝ 2005-09-09, ՀՎՀՀ՝ 060011264, գործադիր տնօրեն՝ Բաբկեն Կառլենի Մակարյան, անձնագիր՝ AU0544815, տրված՝ 10.12.2021թ, 022-ի կողմից, բնակության հասցե՝ մարզ Շիրակ, քաղաք Մարալիկ. Թումանյան փողոց տուն 50):

2. Նշել, որ

1) օտարվող հողամասը չի գտնվում հաստատված պետական կամ համայնքային նշանակության քաղաքաշինական համալիր ծրագրերով նախատեսված գոտիներում,

2) հողամասի օտարումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը կամ վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը,

3) օտարվող հողամասը ընդգրկված չէ Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողերի կազմում:

3. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ղեկավար՝ Արման Սարիբեկյանին.

Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով Քաղաքացու հետ կնքել սույն որոշման 1-ին կետով նախատեսված հողամասի առուվաճառքի պայմանագիր և ապահովել սույն որոշիմից բխող իրավունքների պետական գրանցումը՝ Ընկերության միջոցներով:

4. Որոշումն ուժի մեջ է մտնում սույն որոշման մասին Ընկերությանը պատշաճ ծանուցման պահից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ

	Կողմ՝ 11	**դեմ՝ 0**	**ձեռնպահ՝0**
Ա. ՍԱՐԻԲԵԿՅԱՆ	_____	_____	_____
Է. ՍԱՂԱԹԵԼՅԱՆ	_____	_____	_____
Ռ. ԱՐՇԱԿՅԱՆ	_____	_____	_____
Է. ՈՒՌՈՒՏՅԱՆ	_____	_____	_____
Ա. ՇԱԲՈՅԱՆ	_____	_____	_____

Հ. ՋԱՏԻԿՅԱՆ _____ _____ _____

Ժ. ԱԼԵՔՅԱՆ _____ _____ _____

Գ. ԱՂԱԲԵԿՅԱՆ _____ _____ _____

Ն. ՍԱՐՈՅԱՆ _____ _____ _____

Գ. ԹԱԹԵՎՈՍՅԱՆ _____ _____ _____

Մ. ԵՆՈՔՅԱՆ _____ _____ _____

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ա. ՍԱՐԻԲԵԿՅԱՆ

<<31>> հոկտեմբերի 2024 թ.
քաղաք Մարալիկ